ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 08.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/45

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Բլաժ» ՍՊԸ-ի կողմից 27.11.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/45 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Բլաժ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Բլաժ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 27.11.2017թ. բողոքով հայտնել է, որ «Բլաժ» և «ՍԱՄ-ՀԱՐ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը (այսուհետ նաև՝ Մասնակից) մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով ըմպելու ջրի և պտղաշաքարի ձեռքբերման նպատակով կազմակերպված ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և 23.10.2017թ. հայտարարվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից 1-ին չափաբաժնի մասով:

10.11.2017թ. կայացած՝ մասնակիցների կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստի արձանագրությամբ ձևակերպված է, որ 03.11.2017թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացվել է եզրակացություն, որտեղ նշված է, որ «Բլաժ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից ներկայացված ՀՎՀՀ-ով որևէ կազմակերպություն հաշվառված չէ և հանձնաժողովի կողմից հայտը վերանայելուց հետո պարզվել է, որ առկա է «Բլաժ» ՍՊԸ-ի ՀՎՀՀ-ի վերաբերյալ անճշտություն, ինչի վերաբերյալ Ընկերությունը նույն օրը գրությամբ դիմել է հանձնաժողովին և հայտնել, որ առկա ընդամենը մեկ թվի ավել գրված լինելը տեխնիկական վրիպակի հետևանք է: Հանձնաժողովը Ընկերության գրությունը հաշվի առնելով, որոշել է դիմել գնումների լիազոր մարմնին՝ խնդրելով տալ կարծիք-պարզաբանում, թե արդյոք տվյալ վրիպակը բավարար հիմք է մասնակցի հայտը մերժելու համար, թե ոչ:

Լիազոր մարմինը իր կողմից տրամադրված կարծիքի մեջ հայտնել է, որ դա պետք է որոշի հանձնաժողովը: Այստեղից պարզ երևում է, որ լիազոր մարմինը չի պնդել, որ հայտը պարտադիր ենթակա է մերժման:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.11.2017թ. կայացած նիստին Մասնակցի հայտը մերժվել է, իսկ Ընթացակարգը հայտարարվել է չկայացած, ինչին դեմ է քվեարկել գնահատող հանձնաժողովի անդամներից մեկը և կցել իր հատուկ կարծիքը, որում մասնավորապես նշվել է՝ «գնման առարկան հանդիսացել է խմելու ջուրը, որը խիստ անհրաժեշտ է եղել ձմեռային ժամանակահատվածում անձնակազմի ապահովման համար, ինչպես նաև երկրորդ անգամ մրցույթային գործընթաց կազմակերպելու համար ժամկետները բավարար չեն եղել: Միաժամանակ նշված ծածկագրով մրցույթի տվյալ չափաբաժնի մասով երկրորդ մասնակից չի եղել, ինչը կարող էր ենթադրել երկրորդ մասնակցի միջոցով նշված նյութական միջոցի ձեռքբերումը»:

«Բլաժ» ՍՊԸ-ն ընդունում է, որ հայտում առկա է նման անհամապատասխանություն, սակայն դա ակնհայտ տեխնիկական վրիպակ է, ինչը պարզ երևում է նաև ներկայացված համատեղ գործունեության պայմանագրում, Ընկերության կնիքի վրա առկա ՀՎՀՀ-ից, ինչը առկա է մասնակցության հայտում, որտեղից պարզ երևում է, որ ընդամենը մեկ թիվ

ավել է նշվել: Մասնակիցը հայտնում է իր պատասխանատվությունը հանձնաժողովի կողմից պահանջի դեպքում անմիջապես տրամադրել շտկված մասնակցության հայտ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի փոփոխելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի ընդունած որոշումները:

Ուսումնասիրելով տվյալ գործում առկա բոլոր գրությունները, այդ թվում՝ լիազոր մարմնի կողմից տրված գրությունը, արձանագրությունները, հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքը, պարզ է դառնում, որ նման չնչին վրիպակի պատճառով մասնակցի հայտի մերժումը և դրանով Պատվիրատուի մոտ էական խնդիրներ առաջացնելը չի բխում Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակներից և սկզբունքներից, և այդ սկզբունքները խախտվում են, քանի որ Պատվիրատուն այլևս մրցակցային ձևով գնման ընթացակարգ կազմակերպելու ժամանակ չունի, և իր կարիքի բավարարման համար ստիպված է ձեռք բերել ոչ մրցակցային գներով ապրանքներ:

«Բլաժ» ՍՊԸ-ն Խորհրդին ուղղված բողոքով խնդրել է՝

1. Չեղարկել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.11.2017թ. նիստի արձանագրության 2-րդ կետի 2.1 կետով կայացված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը.

2. Չեղարկել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.11.2017թ. նիստի արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով կայացված՝ Մասնակցի հայտը մերժելու մասին որոշումը և այն գնահատել բավարար:

«Բլաժ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 01.12.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը Խորհրդին ուղղված 03.12.2017թ. թիվ ԴՎԱ/4409 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար անհրաժեշտ օշարակի և ըմպելու ջրի գնման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստում արձանագրվել է, որ ըմպելու ջրի մասով միակ մասնակից «Բլաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անճշտություն, մասնավորապես՝ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում (ներառյալ հայտի ապահովումը) Ընկերության ՀՎՀՀ-ն սխալ է լրացված (առկա է ավելորդ նիշ):

Վերոնշյալից ելնելով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, գնահատող հանձնաժողովի կողմից «Բլաժ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը ՀՎՀՀ-ն սխալ լրացնելու հիմքով դեպքեր արձանագրվել են նաև ՀՀ ՊՆ մրցութային մյուս հանձնաժողովների կողմից և նման նախադեպ առկա է:

Պատվիրատուն նշել է, որ «Բլաժ» ՍՊԸ-ի հայտի մերժման հետևանքով ներկայումս առկա է ՀՀ ԶՈՒ անձնակազմի ապահովման խնդիր (ըմպելու ջրի պահանջարկը ներկայումս առկա է) և ՀՀ ՊՆ մրցութային հանձնաժողովի կողմից հայտը մերժվել է միայն գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջներից ելնելով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 01.12.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2017/45 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/45 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ըմպելու ջրի և պտղաշաքարի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Բլաժ» և «ՍԱՄ-ՀԱՐ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը հայտ է ներկայացրել:

2. Մասնակցի հայտի թիվ 1 հավելվածում՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումի մեջ, «Բլաժ» ՍՊԸ-ի հարկ վճարողի հաշվառման համարը նշվել է **«009032296»**:

3. «Բլաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի թիվ 10 հավելված հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագրի և դրան կից վճարման պահանջագրի մեջ «Բլաժ» ՍՊԸ-ի հարկ վճարողի հաշվառման համարը նույնպես նշվել է **«009032296»:**

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետով կայացված որոշմամբ «Բլաժ» «ՍԱՄ-ՀԱՐ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը, առաջնորդվելով Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով, 30.10.2017թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացրել «Բլաժ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ նշելով Ընկերության անվանումը և հարկ վճարողի հաշվառման **«009032296»** համարը:

6. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգի 44-րդ կետով սահմանված կարգով 03.11.2017թ. տրամադրվել է եզրակացություն, որտեղ «Բլաժ» ՍՊԸ-ի մասով նշվել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում այդպիսի ՀՎՀՀ-ով հաշվառված հարկ վճարող չկա:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Բլաժ» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Բլաժ» ՍՊԸ-ի 27.11.2017թ. բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 03.12.2017թ. թիվ ԴՎԱ/4409 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ ***նշելով հարկ վճարողի հաշվառման համարը:***

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման

համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ***ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:***

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ըմպելու ջրի և պտղաշաքարի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Բլաժ» և «ՍԱՄ-ՀԱՐ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը հայտ է ներկայացրել:

Կոնսորցիումի հայտի թիվ 1 հավելվածում՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումի մեջ մասնակիցներից «Բլաժ» ՍՊԸ-ի հարկ վճարողի հաշվառման համարը նշվել է **«009032296»**:

Միևնույն ժամանակ «Բլաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի թիվ 10 հավելված հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագրի և դրան կից վճարման պահանջագրի մեջ «Բլաժ» ՍՊԸ-ի հարկ վճարողի հաշվառման համարը նույնպես նշվել է **«009032296»:**

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Բլաժ» ՍՊԸ-ի և «ՍԱՄ-ՀԱՐ» ՍՊԸ-ի միջև 19.10.2017թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի Գործընկեր-1 «Բլաժ» ՍՊԸ-ի վավերապայմանների մեջ ՀՎՀՀ-ն նույնպես նշվել է «009032296»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետով կայացված որոշմամբ «Բլաժ» ՍՊԸ-ի և «ՍԱՄ-ՀԱՐ» ՍՊԸ-ի կոնսորցիումը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը, առաջնորդվելով Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով, 30.10.2017թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացրել «Բլաժ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ նշելով Ընկերության անվանումը և հարկ վճարողի հաշվառման **«009032296»** համարը:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 03.11.2017թ. տրամադրվել է եզրակացություն, որտեղ «Բլաժ» ՍՊԸ-ի մասով նշվել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում այդպիսի ՀՎՀՀ-ով հաշվառված հարկ վճարող չկա:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ ամրագրվել է, որ գնահատող հանձնաժողովի կողմից «Բլաժ» ՍՊԸ-ի հայտը վերանայելուց հետո պարզվել է, որ Ընկերությունը ներկայացրել է սխալ ՀՎՀՀ, ինչի վերաբերյալ 03.11.2017թ. Ընկերության կողմից ներկայացվել է դիմում՝ իր կողմից ներկայացված հայտի մեջ թույլ տրված տեխնիկական վրիպակի մասին: Հանձնաժողովը որոշել է առաջացած խնդրի մասին տեղյակ պահել լիազորված մարմնին՝ խնդրելով տալ կարծիք-պարզաբանում, թե արդյոք վրիպակը բավարար հիմք է մասնակցի հայտը մերժելու համար, թե ոչ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.11.2017թ. թիվ 03/27-1/20895-17 գրությամբ, վկայակոչելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը և 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, հայտնել է, որ մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացրած որոշմամբ «Բլաժ» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ մերժելով «Բլաժ» ՍՊԸ-ի հայտը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ ***նշելով հարկ վճարողի հաշվառման համարը:***

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4-րդ կետի 4.3 ենթակետի 1-ին պարբերությամբ նախատեսվել է, որ

մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ***գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ <u>նշելով հարկ վճարողի հաշվառման համարը</u>*** և էլեկտրոնային փոստի հասցեն:

Ընդ որում՝ նույն հրավերի ՄԱՍ Ի-ի 8-րդ կետի 8.13 ենթակետի 3-րդ պարբերության համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և ***հարկ վճարողի հաշվառման համարը:*** Նման պահանջն ամրագրված է նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետում: .

Այսպես, «Բլաժ» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության դիմումի մեջ որպես Ընկերության ՀՎՀՀ-ն նշել է «009032296» ինը նիշից բաղկացած համարը: Գնահատող հանձնաժողովը առաջնորդվելով Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության և 43-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով սահմանված կարգով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մեջ նշել է «Բլաժ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի մասնակցության դիմումի մեջ Ընկերության կողմից մատնանշված հարկ վճարողի հաշվառման համարը, և ըստ «Բլաժ» ՍՊԸ-ի կողմից նշված ՀՎՀՀ-ի ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության մեջ ամրագրվել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում տվյալ ՀՎՀՀ-ով հարկ վճարող առկա չէ:

Միևնուն ժամանակ Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Բլաժ» ՍՊԸ-ի կողմից վերը նշված սխալ «009032296» ՀՎՀՀ-ն նշվել է նաև Ընթացակարգի մասնակցության հայտի փաթեթում ներառված մյուս փաստաթղթերում նույնպես, այդ թվում նաև՝ թիվ 10 հավելված հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագրի և դրան կից վճարման պահանջագրի մեջ:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է նշել նաև, որ Կարգի 41-րդ կետով նախատեսված՝ հայտում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու հնարավորությունը տվյալ

դեպքում չի գործում, քանի որ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի ուժով հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացված հայտի ապահովման դեպքում հայտը ենթակա է մերժման:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդն գտնում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն իր գործողությունները կատարել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և մերժելով «Բլաժ» ՍՊԸ-ի հայտը՝ գործել է իրավաչափ, քանի որ «Բլաժ» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի մասնակցության դիմումի, ինչպես նաև հայտի մյուս հավելվածների մեջ ի սկզբանե սխալ է նշվել Ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը (Ընկերության հարկ վճարողի հաշվառման համարն է՝ «00932296», սակայն նշվել է «009032296»), մինչդեռ հրավերի ՄԱՍ I-ի 4-րդ կետի 4.3 ենթակետի 1-ին պարբերության և ՄԱՍ I-ի 8-րդ կետի 8.13 ենթակետի 3-րդ պարբերության համաձայն գնահատող հանձնաժողովի կողմից հիմք է ընդունվում մասնակցի կողմից գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմումի մեջ նշված ՀՎՀՀ-ն, ինչը և արվել է գնահատող հանձնաժողովի կողմից:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «Բլաժ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 27.11.2017թ. ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Բլաժ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 27.11.2017թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**